

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ  
ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԾԱԳՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՍՏՍ  
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**Նելլի Մեյրանի Խառատյան**  
ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի ասպիրանտ

Միջազգային առևտրի ազատականացումը և ազատ շուկայական հարաբերությունները իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցները տեղափոխելիս: Համաձայն ԵԱՏՄ ՄՕ-ի բոլոր անձինք հավասար հիմքերով օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով Միության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելու իրավունք ունեն: Այդ ապրանքները ենթակա են մաքսային հսկողության<sup>1</sup>: Մաքսային հսկողություն իրականացնող սուբյեկտները՝ մաքսային մարմինները, հետևում են, որ վերոնշյալ անձանց կողմից տեղափոխվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնությունները կատարվեն սահմանված կարգով՝ բացառապես օրենսդրական դաշտի շրջանակներում: Այս նյութի շրջանակներում ցանկանում ենք դիտարկել ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով իրականացվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների տեղափոխումները և դրանց ժամանակ ծագող իրավահարաբերությունները մաքսային մարմինների հետ, մասնավորապես՝ դրանց հայտարարագրումն ու մաքսային վճարների գանձումը: Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքները ու տրանսպորտային միջոցները կարող են լինել թե՛ անձնական օգտագործման, թե՛ առևտրային նպատակներով ձեռք բերված: Կախված նպատակային բնույթից՝ դրանց ձևակերպման ու մաքսային վճարների գանձման ընթացակարգերը տարբերվում են. ուստի, խիստ կարևոր է մաքսային ծառայողների կողմից դրանց ճիշտ դասակարգումը:

Համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի. «Անձնական օգտագործման ապրանքներ են համարվում ֆիզիկական անձանց՝ ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ կարիքների համար նախատեսված ապրանքները, որոնք մաքսային սահմանով տեղափոխվում են ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով, միջազգային փոստային առաքանիով կամ այլ եղանակով»<sup>2</sup>: Օրենսդրորեն սահմանված են այն դեպքերը, երբ այդ ապրանքները տեղափոխելիս հայտարարագրումը պարտադիր պայման է: Այդ պարագայում լրացվում է ուղևորային հայտարարագիրը (ՈւՀ): Հաշվի առնելով այն փաստը, որ ԵԱՏՄ

<sup>1</sup> ԵԱՏՄ ՄՕ, Բաժին 1, Գլուխ 2, Հոդված 9.

<sup>2</sup> ԵԱՏՄ ՄՕ, Բաժին 1, Գլուխ 1, Հոդված 2, Կետ 46.

շրջանակներում հայտարարագրման դաշտը փորձում են հնարավորության սահմաններում էլեկտրոնային հարթակ տեղափոխել՝ վերջին մեկ տարվա ընթացքում նկատվում է՝ ուղևորային հայտարարագրերը թղթային տարբերակի փոխարեն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու լուրջ միտում: Այսպիսով, հնարավորություն է ընձեռնվում ստեղծել տեղեկատվական բազաներ, որոնց միջոցով հեշտ կլինի իրականացնել վիճակագրական տվյալների ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև պարզել կոնկրետ ֆիզիկական անձի կողմից իրականացվող ապրանքների տեղափոխման հաճախականությունը, հսկել առանց վճարումների գանձման ապրանքների տեղափոխման թույլատրելի սահմանաչափերի պահպանումը և այլն: Օրինակ՝ ֆիզիկական անձի անունով 2020 թվականին առանց վճարումների անձնական օգտագործման ապրանքները տրանսպորտային կազմակերպության կողմից տեղափոխվելիս սահմանված է, որ ամսական կտրվածքով բեռի քաշը չպետք է գերազանցի 31 կիլոգրամը, իսկ արժեքը՝ 200 եվրոն: Թղթային տարբերակի պարագայում առկա էր խնդիր՝ ժամանակային և ֆինանսական ծախսերի հետ կապված, առաջանում էր թղթային կրիչների վրա պահպանված ՈւՀ-ների արխիվացման անհրաժեշտություն: Կարելի է նկատել, որ թղթային տարբերակի կորուստը կամ խեղումը ավելի ռիսկային է և հավանական, քան նույն փաստաթղթի էլեկտրոնային տարբերակինը, որն ավելի հուսալի է, ինչպես նաև թղթային արխիվից տվյալների որոնումը ժամանակատար է և ոչ նպատակահարմար: Հաշվի առնելով այն փաստը, որ մարդկային գործոնն այս պարագայում մեծ է, ուստի մեծ է նաև վրիպելու հավանականությունը: Արդյունքում, թյուրիմացաբար, հնարավոր էր, օրինակ, չնկատել տվյալ ամսում առանց մաքսային վճարների գանձման հասանելիք սահմանաչափերի շրջանակներում տրամադրված արտոնությունը, որի արդյունքում մաքսային ծառայողը կարող էր նույն ամսում կրկնակի արտոնություն տրամադրել նույն անձին, և պետությունը կկորցնեք օրենսդրորեն սահմանված հասանելիք մուտքերը: Մինչդեռ, էլեկտրոնային համակարգի պարագայում ծրագիրն ինքնաշխատ կերպով հաշվարկում է այդ ամսվա կտրվածքով տվյալ ֆիզիկական անձի կողմից ներմուծված ապրանքների քաշն ու արժեքը՝ բացառելով սխալվելու հավանականությունը: Ինչպես նաև հնարավորություն է տալիս ուսումնասիրել առկա բազան, որի արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ ֆիզիկական անձը բեռը ներմուծում է ոչ թե անձնական, այլ առևտրային նպատակներով՝ հաշվի առնելով, օրինակ՝ ապրանքների տեղափոխմամբ ուղեկցվող սահմանահատման հաճախականությունը կամ իր անունով տրանսպորտային կազմակերպության կողմից առաքումների հաճախականությունը, ապրանքների տեսակը, քանակը ու բնույթը: Այս կերպ բացառվում է անբարեխղճորեն առևտրային նպատակներով

ներմուծված բեռը որպես անձնական իրեր որակելը և այդ պատրվակով մաքսային վճարներից խուսափելը: Երբ բեռը դիտարկվում է որպես առևտրային նպատակներով ներմուծված, հայտարարագրումն իրականացվում է ապրանքային հայտարարագրի (ԱՀ) միջոցով:

ՈւՀ-ով հայտարարագրված այն անձնական օգտագործման ապրանքների համար, որոնց մասով օրենսդրորեն սահմանված է մաքսային վճարների գանձում, լրացվում է նաև մաքսային մուտքի օրդեր (ՄՄՕ): Հարկումը կատարվում է երկու ձևով՝ համախառն և միասնական: Նախկինում հարկման ձևի որոշումը պայմանավորված էր ապրանքի մասնատվող լինելու կամ չլինելու փաստով: Եթե ապրանքը չմասնատվող էր, այսինքն այն իրենից ներկայացնում էր մի ամբողջական ապրանք և գերազանցում էր ընդունված սահմանաչափերը, ապա ապրանքի հարկումն իրականացվում էր համախառն տարբերակով՝ առանձին-առանձին՝ մաքսատուրքը արտաքին տնտեսական գործունեության ԵԱՏՄ Միասնական անվանացանկով (ԱՏԳ ԵԱՏՄ ՄԱ) սահմանված դրույքաչափերով, իսկ հարկերը անդամ պետության օրենսդրությամբ սահմանված չափով: Իսկ եթե ապրանքը մասնատվող էր, ապա կիրառվում էր միասնական տիպի հարկման մեթոդը, այսինքն՝ գանձումը մեկ միասնական մեծությամբ էր, առանց բաղադրիչների տրոհման: Սահմանվում էր հարկման նվազագույն մեծություն, որի դեպքում հարկման բազան ապրանքի քաշն էր, իսկ երբ այն ավելի փոքր էր, քան արժեքից հաշվարկված սահմանված տոկոսը, ապա հարկման բազան դառնում էր արժեքը: Այժմ կան սկզբունքային փոփոխություններ՝ պայմանավորված ԵՏՀ N107 առ 20.12.2017թ. որոշման 2019 թվականի խմբագրման հետ: Համախառն եղանակով հարկվում են միայն որոշ տրանսպորտային միջոցներ, իսկ մնացած ապրանքների մասով հարկումն իրականացվում է միասնական դրույքաչափով: Դիտարկենք երկու տարբերակ.

**Տարբերակ 1:** Օրինակ՝ ֆիզիկական անձի կողմից ուղեկցվող ուղեբեռով ներմուծվել է 40կգ օգտագործված հագուստ 200 եվրո արժողությամբ: Մաքսային մարմնի կողմից բեռը անձնական դասելու պարագայում, առանց մաքսատուրքերի ու հարկերի վճարման կներմուծվի 25կգ 125 եվրո արժողությամբ հագուստը: 15 կգ 75 եվրո արժողությամբ մնացած բեռի ներմուծման համար օրենսդրորեն սահմանված է մաքսային վճարների գանձում՝ միասնական տարբերակով, մասնավորապես. արժեքից հաշվարկվում է 30% գանձում, բայց ոչ պակաս քան դրա յուրաքանչյուր կիլոգրամի համար 4 եվրոն: Հաշվարկների արդյունքում պարզ է դառնում, որ գանձումը կկազմի 60 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ԿԲ-ի կողմից հրապարակված այդ օրը գործող փոխարժեքով ( $75 \times 30\% = 22.5$  եվրո;  $15 \times 4 = 60$  եվրո;  $22.5 < 60$ ):

**Տարբերակ 2:** Օրինակ՝ ֆիզիկական անձի կողմից տրանսպորտային կազմակերպության միջոցով ներմուծվել է թվով մեկ մոտոցիկլետ 600 սմ<sup>3</sup> շարժիչի ծավալով՝ 800 ԱՄՆ դոլար արժողությամբ: ԱՏԳ ԵԱՏՄ ՄԱ-ով այս մոտոցիկլետը դասակարգվում է 8711 40 000 0 կոդով, որի մաքսատուրքը սահմանվում է 15%, իսկ ԱԱՀ-ն՝ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 20%: Այսպիսով՝ մաքսատուրքի գումարը կկազմի 120, իսկ ԱԱՀ-ն՝ 184 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ԿԲ-ի կողմից հրապարակված այդ օրը գործող փոխարժեքով ( $800 \times 15\% = 120$  ԱՄՆ դոլար;  $(800 + 120) \times 20\% = 184$  ԱՄՆ դոլար): Հատկանշական է, որ եթե մոտոցիկլետը ներմուծված լիներ առևտրային նպատակներով կամ քանակով, ապա գանձումները կրկին նույնը կլինեին: Տարբերությունը հարկման բազան է. քանի որ անձնական օգտագործման ապրանքների պարագայում տրանսպորտային ծախսերը մաքսային արժեքում չեն ներառվում՝ ի տարբերություն այլ դեպքերի:

Նշենք, որ ՄՄՕ-ի ներդրմամբ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման իրերի հայտարարագրման ժամանակ այլևս կարիք չի առաջանում հայտարարագրի լրացման համար մաքսային ներկայացուցչին դիմելու, քանի որ ի տարբերություն մաքսային միջնորդի կողմից վճարովի հիմունքներով լրացվող հայտարարագրի, ՄՄՕ-ն լրացվում է մաքսային ծառայողների կողմից՝ անվճար հիմունքներով:

ԵՏՀ N107 առ 20.12.2017թ. (2019թ. խմբագրությամբ) որոշումը կարգավորում է ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մի շարք դրույթներ՝ դրանց վճարումներից ազատման դեպքերը, գանձման դեպքերը, կարգը, արգելքները, առանձնահատկությունները և այլն: Այդ որոշումից առանձնացրել ենք առանց մաքսատուրքերի ու հարկերի վճարման ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մի քանի դեպք.

### Աղյուսակ 1

#### Առանց մաքսատուրքերի ու հարկերի վճարման՝ ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող անձնական օգտագործման իրերի ներմուծման որոշ դեպքեր

Առանձնահատկության	Չափաքանակ
Ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռ՝ անձնական օգտագործման ապրանքներ՝ օդային տրանսպորտով տեղափոխվող	Մինչև 10 000 եվրո արժողությամբ և/կամ/ 50կգ քաշով
Ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռ՝ անձնական օգտագործման	Մինչև 500 եվրո արժողությամբ և/կամ/ 25կգ քաշով

ապրանքներ, բացի օդային տրանսպորտով տեղափոխվողից	
Տրանսպորտային կազմակերպության կողմից տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքներ,	2019թ. մինչև 500 եվրո արժողությամբ և/կամ/ 31կգ քաշով 2020թ. մինչև 200 եվրո արժողությամբ և/կամ/ 25կգ քաշով

«Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից, ելնելով՝

1) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ.

2) ապրանքների բնույթից և քանակից.

3) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից»:<sup>1</sup>

Հաճախ խնդիրների ենք բախվում ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ներմուծումների հայտարարագրման ժամանակ: Նախ, կա հստակեցման անհրաժեշտություն, կապված ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների՝ որպես անձնական դասելու կամ չդասելու և դրանով պայմանավորված՝ ապրանքները հայտարարագրելիս ուղևորային հայտարարագիր (ՈւՀ) և մաքսային մուտքի օրդեր (ՄՄՕ) կամ ապրանքային հայտարարագիր լրացնելու հետ կապված: ՀՀ կառավարության 30.07.2015թ. թիվ 865-Ն որոշմամբ սահմանվում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները: Նշենք, որ նույն որոշման 5-րդ կետում նշված է. «ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար հարկերը վճարվում են ներմուծվող ապրանքների՝ որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները գերազանցող մասի համար», մինչևդեռ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) 20.12.2017թ. թիվ 107 որոշման 1-ին հավելվածը սահմանում է այն արժեքային, կշռային և քանակական սահմանափակումները անձնական օգտագործման ապրանքների համար, որոնց դեպքում ԵԱՏՄ մաքսային տարածք ֆիզիկական անձանց կողմից ներմուծումն ազատվում է մաքսատուրքերի և հարկերի վճարումից: Ենթադրենք, ֆիզիկական անձն իր անունով տրանսպորտային կազմակերպության միջոցով ներմուծում է ննջասենյակի փայտից կահույք՝ 1

<sup>1</sup> ԵԱՏՄ ՄՕ, Բաժին 5, Գլուխ 37, Հոդված 256, Կետ 4.

հավաքածու, 1500 եվրո արժողությամբ: Այն կշռում է 600 կգ: Չգերազանցելով ՀՀ կառավարության 30.07.2015թ. թիվ 865-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը (9403 - Այլ կահույք և դրանց մասեր - 6 հատյուրաքանչյուր ենթադիրքից, բայց 12 հատից ոչ ավել<sup>1</sup>), ապրանքը գերազանցում է ԵՏՀ 20.12.2017թ. թիվ 107 որոշման 1-ին հավելվածի սահմանած 31 կգ-ը, արդյունքում մենք պետք է առաջնորդվենք ԵՏՀ որոշմամբ, քանի որ այն գերակա է՝ չպահպանելով ՀՀ կառավարության 30.07.2015թ. թիվ 865-Ն որոշման 5-րդ կետի սահմանված պայմանը, որն արդյունքում հանգեցնում է ֆիզիկական անձանց թերըմբռնման: Դրա արդյունքում ֆիզիկական անձը բախվեց խնդրի, քանի որ կարծում էր, որ ներմուծելու է առանց մաքսատուրքերի ու հարկերի վճարման, ըստ ՀՀ կառավարության 30.07.2015թ. թիվ 865-Ն որոշման 5-րդ կետի, սակայն փաստացի ստիպված է տվյալ պարագայում 600 կգ ապրանքը (եթե հավաքածուում առկա չէ մասնատվող բեռ մինչև 31 կգ քաշով) ԵՏՀ 20.12.2017թ. թիվ 107 որոշման 2-րդ հավելվածի հիման վրա մաքսազերծել՝ արժեքից 30% բայց ոչ պակաս քան կիլոգրամը 4 եվրո գանձումով: Այսինքն նա վճարելու է 2400 եվրո ( $1500 \times 30\% = 450$  եվրո;  $600 \times 4 = 2400$  եվրո;  $450 < 2400$ ), ինչը լուրջ դժգոհության պատճառ է դառնում, քանի որ երբեմն գերազանցում է նույնիսկ ապրանքի շուկայական արժեքը ( $2400 > 1500$ ): Մինևույն ժամանակ նշենք, որ եթե բեռը լիներ առևտրային նպատակներով ներմուծված, ապա կդասակարգվեր ԱՏԳ ԵԱՏՄ ՄԱ-ի 9403 50 000 9 կոդով (մաքսատուրք 10% և ԱԱՀ 20%) և վճարումը կլիներ անհամեմատ ավելի ցածր՝ ընդհանրացված հարկվելով մաքսային արժեքից 32% (ենթադրենք մաքսային արժեքը կկազմի 2000 եվրո, ուտի գանձումը հավասար կլինի  $1500 \times 32\% = 640$  եվրոյի): Այսպիսով՝ արդյունքում ֆիզիկական անձը կա՛մ կթաքցնի ապրանքի ներմուծման իրական նպատակները՝ հայտարարագրելով որպես առևտրային նպատակներով ներմուծված բեռ, կա՛մ ստիպված կլինի վճարել բավականին մեծ գումար: Ստացվում է, որ օրինապահ տնտեսվարողը կարող է տուժել, եթե չգնա զարտուղի ճանապարհով: Հարց է առաջանում. ինչու՞ մեծ քաշ ունեցող բեռները, ինչպիսիք են օրինակ՝ կահույքը, սառնարանը, վառարանը, լվացքի մեքենան և այլն, որոնք կարող են ակնհայտ կերպով նախատեսված լինել անձնական օգտագործման համար, այդ նպատակով ներմուծվեն անհամեմատ ավելի թանկ, քան առևտրային նպատակներով ներմուծվելու պարագայում: Մինչդեռ, առևտրային նպատակներով ներմուծման պարագայում հարկաման բազան մեծանում է և առաջանում է նաև մաքսային ներկայացուցչի վճարովի ծառայության անհրաժեշտություն: Կամ ինչո՞ւ է պայմանավորված, որ եթե գազօջախը 32 կգ է 400 ԱՄՆ դոլար արժողությամբ, ապա պետք է հարկվի, իսկ 30 կգ է 400 ԱՄՆ դոլար արժողությամբ գազօջախը կարելի է տրամադրել արտոնությամբ: Կարծում ենք կարիք կա, որ ՀՀ-ն Եվրասիական տնտեսական

<sup>1</sup> ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 865-ն որոշում:

հանձնաժողովին (ԵՏՀ) ներկայանա առաջարկությամբ՝ չմասնատվող ապրանքների հարկման առանձնահատկությունների վերանայման համար, ինչպես նաև քննարկվի դրանց արտոնությունների տրամադրման կարգի և ներդրման համակարգի մշակման հնարավորությունները: Օրինակ՝ առաջարկել չմասնատվող ապրանքների ներմուծման պարբերականություն սահմանել ըստ ապրանքատեսակների, և դրանք գերազանցելու դեպքում հարկումը կատարել համախառն հարկման սկզբունքով: Անհրաժեշտ է վերանայել արտոնությունների տրամադրման համակարգը՝ անցում կատարելով ավելի բազմաբնույթ համակարգի, որտեղ կախված ապրանքնատեսակից, նշված կլինի սահմանաչափի տարբերակում՝ որոշ ապրանքների համար կսահմանվի հատաքանակ, մյուսների համար քառակուսի մետր, մեկ ուրիշը կիլոգրամ և այլն: Այդ չափման միավորների ընտրության համար որպես հիմք կարելի է դիտարկել օրինակ ԱՏԳ ԵՏՄ ՄԱ-ով սահմանված լրացուցիչ միավորները:

Գործնականում, հաճախ կարելի է բախվել ներմուծող ֆիզիկական անձանց այն մեկնաբանությանը, թե բեռի մի մասը ներմուծվել է առևտրային, իսկ մյուս մասն էլ անձնական օգտագործման նպատակներով: Հարց է առաջանում, արդյոք մի խմբաքանակում կարող են ներառվել առևտրային և անձնական նպատակներով ներմուծված ապրանքներ և միջթե այդ մեկնաբանությունը պարզապես հարկվելուց խուսափելու միտում չունի: Դիտարկենք հաջորդ օրինակը՝ ֆիզիկական անձը ներմուծել է 20 հատ օձանելիք, որը տվյալ պարագայում գերազանցում է սահմանված չափաքանակը՝ 5 հատ յուրաքանչյուրից: Նախ, ինչպե՞ս պետք է մեկնաբանել ճյուրաքանչյուրից՝ տերմինը և արդյոք ապրանքը պետք է համարել ամբողջությամբ առևտրային և հայտարարագրել ԱՀ-ով, թե՞ չափաքանակով սահմանված մասը դիտարկել անձնական, իսկ գերազանցող մասի համար զանձել համապատասխան վճար՝ ձևակերպելով ՄՄՕ-ով կամ ԱՀ-ով: Ուստի, կարծում ենք կարիք կա օրենսդրորեն հստակեցնել ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների հայտարարագրման առանձնահատկությունները, տալ պաշտոնական պարզաբանում և վերանայել հակասող դրույթները՝ ՀՀ կառավարության 30.07.2015թ. թիվ 865-Ն որոշման մեջ կատարելով համապատասխան փոփոխություններ:

Մեկ այլ խնդրի էլ հաճախ կարելի է բախվել սահմանային անցակետերում՝ մաքսային կետ-բաժիններում: ԵՏՀ 20.12.2017թ. թիվ 107 որոշման 1-ին հավելվածում սահմանված ուղեկցվող ուղեբեռին տրվող արտոնության մասով որևէ ժամանակային սահմանափակում նշված չէ, ի տարբերություն տրանսպորտային կազմակերպության կողմից իրականացվող բեռի տեղափոխմանը, որի պարագայում սահմանաչափերը սահմանված են ամսական կտրվածքով: Այս փաստից օգտվելով՝ որոշ տնտեսվարող սուբյեկտներ փորձում են առանց հարկերի ու տուրքերի

վճարման պարբերաբար ապրանք ներմուծել: Մակայն, հիմք ընդունելով ֆիզիկական անձի մաքսային սահմանը հատելու կամ այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունը, մաքսային մարմինները բեռը կարող են չդիտարկել որպես անձնական օգտագործման բեռ: Այդպիսի որոշմանն ի պատասխան՝ տնտեսվարողները գնում են բախումների՝ երբեմն խոչընդոտելով մաքսային մարմինների բնականոն աշխատանքը: ԵՏՀ-ն բավականին կտրուկ է արձագանքում այս հարցին: Եթե 2018 թվականին թույլատրելի սահմանաչափը 50կգ 1500 եվրո էր, ապա արդեն 2020 թվականի համար այն արդեն 25կգ, 200 եվրո կլինի: Այս կոշտ քաղաքականությամբ հնարավորինս փորձում են բացառել զարտուղի ճանապարհներով հարկերից ու տուրքերից խուսափելու մեխանիզմների կիրառումը: Առաջարկում ենք այս կետում ներառել ևս մի դրույթ, որը կսահմանի ամսական կտրվածքով արտոնության տրամադրմամբ տեղափոխվող բեռների առավելագույն թույլատրելի քանակը:

Մաքսային վճարներից ազատումը բացի տնտեսական նպատակներից, կարող է ունենալ նաև այլ նպատակներ. օրինակ՝ խրախուսել հայրենադարձությունը: Մշտական բնակության նպատակով ՀՀ ժամանած ֆիզիկական անձանց տրամադրվում է արտոնություն՝ ներմուծման մաքսատուրքից և հարկերից ազատում, եթե պահպանված են օրենսդրորեն սահմանված բոլոր դրույթները, մասնավորապես. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 249-րդ հոդվածների ԵԱՏՄ օրենսդրությանը չհակասող մասով, ԵՏՀ խորհրդի 20.12.2017թ. N107 որոշման 3-րդ հավելվածի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 03.12.2015թ. 1461-Ն որոշմամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման, ՀՀ կառավարության 12.11.2015թ. 1312-Ն որոշմամբ սահմանված չափաքանակները չգերազանցելու պահանջները:

Նշենք դրանցից հիմնական մի քանիսը՝ վերջին հինգ տարիների ընթացքում քաղաքացու մշտական բնակության վայրը չպետք է լինի ՀՀ-ն, ներմուծված ապրանքները պետք է լինեն օգտագործված, կահույքի հավաքածուները լինեն մեկական օրինակից, տեխնիկա-սարքավորումներից յուրաքանչյուր տեսակը չպետք է գերազանցի երեք հատը, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է լինի մեկից ոչ ավել և առնվազն վերջին վեց ամիսների ընթացքում հաշվառված լինի այդ ֆիզիկական անձի անունով, բոլոր ապրանքները պետք է գնված լինեն մինչև այդ անձի ՀՀ ժամանելը և չունենան գործարանային փաթեթավորում: Նմանատիպ արտոնություն է տրամադրվում նաև ՀՀ դիվանագետներին, ովքեր ՀՀ-ի կողմից գործուղվել էին տարբեր երկրներ և ծառայությունն ավարտելուց հետո վերադառնում են հայրենիք: Նշենք, որ այս արտոնությունը չի կարող



տրամադրվել ավելին քան տարին մեկ անգամ: Սակայն, երբ որևէ պայմանի կամ պահանջի հետ անհամապատասխանության պատճառով չեն ստանում արտոնություն, ապա ստիպված են լինում ձևակերպումը կատարել, արժեքից 30% բայց ոչ պակաս քան կիլոգրամը 4 եվրո գանձման սկզբունքով: Այս պարագայում խոսքը գնում է մինչև մի քանի տոննա բեռի մասին՝ արդյունքում կրում են հսկայական ծախսեր կամ ստիպված են լինում ձևակերպել որպես առևտրային բեռ՝ լրացնելով ԱՀ: Այստեղ ծագում են լրացուցիչ խնդիրներ կապված ապրանքների մասին տրվող հանգամանակից տվյալների բացակայության, մաքսային ներկայացուցչի կողմից տրամադրվող ծառայությունների բարձր արժեքների և ժամանակային կորստի հետ: Որպես այլընտրանքային լուծում առաջարկվում է ԵՏՀ 20.12.2017թ. թիվ 107 որոշման 3-րդ հավելվածի 4-րդ կետը, ըստ որի՝ ԵԱՏՄ անդամ անձինք, ովքեր առնվազն 12 ամիս ժամանակավոր բնակվել են օտարերկրյա պետությունում, կարող են ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով միություն ներմուծել իրենց՝ 5000 եվրոն չգերազանցող արժողությամբ անձնական օգտագործման իրերը (բացառությամբ իրենց ավտոմեքենաների և ավտոմեքենաների թափքերի)՝ առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, եթե հիմնավորվի իրենց դրսում ժամանակավոր բնակվելու փաստը: Հիմնավորման կարգը սահմանվում է անդամ պետության սահմանած կարգով, որը մեր երկրի պարագայում բացակայում է: Այսինքն՝ ստացվում է, որ օրենքով նախատեսված արտոնությունով բեռը ձևակերպելու ցանկության դեպքում ֆիզիկական անձը կբախվի խնդրի: Առաջարկում ենք վերանայել մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց արտոնությունների տրամադրման կարգը, մշակել կարգ հարկադիր տեղահանված ֆիզիկական անձանց և ԵՏՀ 20.12.2017թ. թիվ 107 որոշման 3-րդ հավելվածի 4-րդ կետով նախատեսված անձնական օգտագործման իրերի ներմուծման վերաբերյալ և ներկայանալ համապատասխան պաշտոնական պարզաբանմամբ:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ  
ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԾԱԳՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵԱՏՄ  
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**Նելլի Մեյրանի Խառատյան**  
ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի ասպիրանտ

**Համառոտագիր**

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցությունից հետո նկատվեցին բազմաթիվ փոփոխություններ, հատկապես, մաքսային գործի կարգավորման ոլորտում և օրենսդրական դաշտում, քանի որ ԵԱՏՄ շրջանակներում անդամ

պետությունները վարում են միասնական մաքսային քաղաքականություն: Այդ փոփոխություններն իրենց ազդեցությունը թողեցին նաև ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով իրականացվող բեռների տեղափոխման, դրանց ձևակերպումների և մաքսային վճարների գանձման մասով: Ուստի նպատակահարմար ենք գտնում ուսումնասիրել դաշտը և բացահայտել առկա խնդիրները՝ առաջադրելով հնարավոր լուծման տարբերակներ:

**Բանալի բառեր՝** ֆիզիկական անձ, մաքսային գործ, ապրանքների տեղափոխում, մաքսային վճարներ, անձնական օգտագործման իրեր, օրենսդրական դաշտ, արտոնություններ, խնդիրներ, բարելավման ուղիներ:

## **ПРОБЛЕМЫ, ВОЗНИКАЮЩИЕ ВО ВРЕМЯ ТАМОЖЕННЫХ СБОРОВ И ДЕКЛАРАЦИИ ГРУЗА ФИЗИЧЕСКИМИ ЛИЦАМИ ПРИ ПЕРЕСЕЧЕНИИ ГРАНИЦ В РАМКАХ ЧЛЕНСТВА В ЕАЭС**

**Нелли Сейрановна Харатян**  
Аспирант факультета Финансов АГЭУ

### **Аннотация**

После присоединения Республики Армения к ЕАЭС были произведены изменения в законодательстве и в сфере регулирования таможенного дела в связи с единой таможенной политикой членов ЕАЭС. Эти изменения повлияли так же на перемещение товаров личного пользования физическими лицами, декларирование этих товаров, и сбор таможенных платежей. В связи с этим считаем необходимым изучить эту сферу, найти проблемы и предлагать возможные варианты решения.

**Ключевые слова:** физическое лицо, таможенное дело, перемещение товаров, таможенные сборы, личные вещи, законодательство, проблемы, варианты улучшения.

## **ISSUES ARISING DURING CUSTOMS DUTY AND DECLARATION OF GOODS BY INDIVIDUALS WHEN CROSSING BORDERS WITHIN MEMBERSHIP IN THE EAEU**

**Nelly Seyran Kharatyan**  
PhD Student of ASUE Finance Faculty

### **Abstract**

As a member of EAEU Armenia has undergone noticeable changes, especially in the sphere of Customs regulation and legislation due to the fact of running a unified customs policy by EAEU members. These changes affected transportation of goods by physical entities across customs border, their registration process and

collection of customs duties. Thus, we find it relevant to study the field to identify the problems and offer possible solutions.

**Keywords:** physical entities, Customs, transportation of goods, Customs duties, Personal effects, legislation field, problems, ways of improvement.